

# ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Ինչ տարբերություն է այն անում

«Եվ եթե Քրիստոսը հարություն չի առել, ուրեմն մեր քարոզությունն ունայն է, ունայն էլ և մեր հավատը:  
Եվ եթե Քրիստոսը հարություն չի առել, ձեր հավատն ունայն է, ու դեռ ձեր մեղքերի մեջ եք:» Ա Կոր 15:14 և 17

«բայց հիմա Քրիստոսը մեռելներից հարություն է առել...» Ա Կորնթացիս 15:20

«Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ և այսօր և հավիտյան:» Եբրայեցիս 13:8

Որովհետև Հիսուսը այսօր էլ կենդանի է...

1- Նրա նպատակը դեռևս անփոփոխ է

Հիսուսը ասաց, «Ես եկա, որ կյանք ունենան և է՛լ ավելին ունենան:» Հովհաննես 10:10

«Որովհետև Աստված իր որդուն աշխարհ չուղարկեց, որպեսզի աշխարհին դատի, այլ որպեսզի նրա միջոցով աշխարհը փրկվի:» Հովհաննես 3:17

2- Նրա գործությունը դեռևս առկա է

«Եվ ի՛նչ է մեր մեջ նրա գործության գերազանց մեծությունը, որ իր կարող գործության հաջողության պես հավատացինք: Որ քրիստոսի մեջ գործադրեց՝ նրան մեռելների միջից հարություն տալով...» Եփեսացիս 1:19-20

«Ամեն բան կարող եմ ինձ գորացնող Քրիստոսով:» Փիլիպպեցիս 4:13

3- Նրա խոստումները դեռևս հուսալի են

«Որովհետև որքան Աստծու խոստումներ որ կան, նրա մեջ է "այո"-ն. Նրանում է "ամեն"-ը. Աստծու փառքի համար մեզանով:» Բ Կորնթացիս 1:20

«...Հիսուս Քրիստոսի՝ մեռելներից հարություն առնելով, մեզ վերստին ծնեց դեպի կենդանի հույս.» Ա Պետրոս 1:3

Նրա խոստումներից մի քանիսը

«Եվ իմ Աստվածը թող իր հարստության չափով ձեր կարոտությունը լցնի՝ փառքով Քրիստոս Հիսուսի մեջ:» Փիլիպպեցիս 4:19

«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ժամանակ կգա, և հիմա է, որ մեռելներն Աստծու Որդու ձայնը կլսեն, ու լսողները կկենդանանան:» Հովհաննես 5:24

«Որովհետև եթե Հիսուսին բերանովդ Տեր դավանես և սրտումդ հավատաս, որ Աստված նրան մեռելներից հարություն տվեց, կփրկվես:» Հռովմայեցիս 10:9

«Ահա ես դռան առաջ հանգնած եմ ու բախում եմ. Եթե մեկն իմ ձայնը լսի և դուռը բացի, նրա մոտ կմտնեմ ու նրա հետ կնթրեմ, նա էլ՝ ինձ հետ:» Հայտնություն 3:20

Հաջորդ քարոզի թեման  
**Դադարի՛ր վախենալուց**  
Սարո Խաչիկեան